ԱՐՈՒԵՍՏ

ՇՈՒՇԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

Մուտք

Կրթական եւ մշակութային խոշոր կեդրոն հայկական Շուշին թատերարուեստի պատմութեան էջերում մնայուն տեղ ունի: Այստեղ բազմաթիւ ներկայացումներով հանդէս են եկել հայ բեմի նշանաւոր դէմքեր եւ նպաստել թատերական աւանդոյթների սկզբնաւորմանը: Շուշիում թատրոնը դիտուել է ոչ այնքան գեղարուեստական, որքան ազգային ու համամարդկային երեւոյթ: Դրա մասին են վկայում «Մշակ» թերթի եւ այլ պարբերականների հրապարակումները, թատերական գործիչների յուշագրութիւնները: «Խանդամիրեան» թատրոնում, որը քաղաքի մշակութային այցեքարտերից էր, բեմադրուել են հայ, ռուս եւ եւրոպացի հեղինակների հանրայայտ պիեսներ: Ռուսական պիեսներից մասնաւորապէս Պուշկինի «Ջրահարսը», «Ժլատ ասպետը», «Քարէ հիւրը», Գոգոլի «Վերաքննիչը», «Ամուսնութիւնը», «Խելագարի նոթերը», Չեխովի «Արջը», «Առաջարկութիւնը», Լերմոնտովի «Դիմակահանդէսը», Օստրովսկու «Անտառը», «Անմեղ մեղաւորներ» եւ այլ պիեսներ: Բեմադրուել են նաեւ Իբսենի, Դիմայի, Ջիակոմետիի, Զուդերմանի, Սերվանտեսի, Շիլլերի, Մոլիերի, Հիւգոյի, Շէյքսփիրի եւ այլ նշանաւոր հեղինակների պիեսներ: Թատրոնը հիմնադրման օրուանից բուռն գործունէութիւն ծաւալեց եւ բնակչութեան համար դարձաւ հոգեւոր սննդի հիմնական աղբիւր մինչեւ շէնքի հրդեհման օրը: Երկար ժամանակ թատերական կեանքը քաղաքում վայրէջք է ապրել:

1992 թուականին՝ Բերդաքաղաք Շուշիի ազատագրումից մի քանի տարի անց, քաղաքի վերականգնմանը զուգահեռ սկսեց թատերական նոր ալիք բարձրանալ. դրան հետեւեց Սոս Սարգսեանի անուան մանկապատանեկան, Երուանդ Մանարեանի անուան տիկնիկային եւ Շուշիի դրամատիկական թատրոնների հիմնադրումը: Այս երեք թատրոնները գործեցին մինչեւ 2008 թուականը: Նոյն թուականին միաւորուելով երեք թատրոնները՝ ստեղծւում է «Աստղիկ» մանկապատանեկան թատրոնը, որը 2009 թուականին վերանուանուեց Շուշիի Մ. Խանդամիրեանի անուան պետական թատրոն:

Այսօր էլ Ատրպէյճանի կողմից օկուպացուած հայկական Շուշիի Մ. Խանդամիրեանի անուան պետական թատրոնը շարունակում է գործել՝ արդէն շրջիկ թատրոնի կարգավիճակում ու նոր կարգախօսով՝ «Որտեղ մեր հանդիսատեսն է, այնտեղ էլ Շուշիի թատրոնն է»:

Թատերական աւանդոյթների սկզբնաւորումը Շուշիում

Շուշիում մինչեւ 1865 թուականը պրոֆեսիոնալ թատրոն չի գործել, սակայն հայ թատերական աւանդոյթները Շուշիում սկզբնաւորուել են 19-րդ դարի վաթսունականներին: 1865 թուականի Յունիսին թատերարուեստի ականաւոր գործիչներ, Թիֆլիսահայ դերասաններ Գէորգ Զմշկեանը, Սեդրակ Մանդինեանը եւ Միհրդատ Ամրիկեանը միասին, ներկայացումներ խաղալու նպատակով, գալիս են Շուշի[1]: Շուշիում խում-

[1] Տե՛ս **Գ. Զմշկեան**, Իմ յիշատակարանը, Երեւան, 1953, էջ 47-57:

բը խաղացել է Ս. Հէքիմեանի «Սամուէլ», Հ. Կարինեանի «Վարդան Մամիկոնեան» եւ «Շկոլի վարժապետ» ներկայացումները՝ զինուորական փողային նուագախմբի ուղեկցութեամբ: Այսպիսով տեղի բնակչութիւնը հաղորդակից էր լինում բեմարուեստի նշանաւոր դէմքերի մատուցած բարձրակարգ արուեստին, գեղագիտական առումով հասնում նոր դիրքերի: Ծիսակատարութիւններից, քաղաքի կենցաղից ու սովորոյթներից դէպի թատրոն ազդակները Շուշիի բնակչութեանը հոգեհարազատ էր, չնայած կային նաեւ թատրոնի նկատմամբ նախապաշարումներ: Չենք կարող միանշանակ պնդել, որ մինչեւ Զմշկեանի Շուշի գալն այդտեղ ներկայացումներ չեն բեմադրուել, քանի որ մամուլը (այս դէպքում «Ազգագրական հանդէսը») ենթադրելի նիւթ է ի ցոյց դնում: Հայ ազգագրագէտ Երուանդ Լալայեանի խմբագրութեամբ «Ազգագրական հանդէսում» կարդում ենք. «Շուշիում առաջին հայկական ներկայացումը տեղի է ունեցել դեռ վաթսունական թուականներին, երբ հայրենիք վերադարձած ուսանողները ոչ միայն տղամարդու, այլեւ կանանց դեր են կատարել: Այնուհետեւ թեմական դպրոցի ուսուցչական խումբը եւ շրջիկ դերասանները ներկայացումներ են տուել թեմական դպրոցի դահլիճում»[2]: Բայց միանշանակ է, որ Գ. Զմշկեանի հիւրախաղերից յետոյ Շուշիի մշակութային կեանքում նկատւում են շրջադարձային փոփոխութիւններ: Սկսում է զարգանալ թատերական գործը: 1868 թուականից սկսած Համբարձում աղայ Հախումեանի տան դահլիճում, թեմական դպրոցում ու քաղաքային ակումբում բեմադրուել են նաեւ բարբառային ներկայացումներ:

Նշանակալից է 1882 թուականի Յուլիսին հայ բեմի վարպետ, դերասան Պետրոս Ադամեանի (1849-1891) մուտքը Շուշիի թատերական դաշտ: Ադամեանի հանրայայտ դերերը՝ Կորրադոն (Ջակոմոտտի «Ոճրագործի ընտանիքը») եւ Համլետը, շուշեցի հանդիսատեսին էլ է տպաւորել: Պետրոս Ադամեանի բեմական խաղի ականատեսն էր նաեւ Լէոն, որը մեծ ոգեւորութեամբ է գրել այդ մասին. «Դէմքերի վրայ շէյքսփիրեան հանճարի հրճուանքն էր դրոշմուել. արուեստի բարձր գաղափարների ու ճաշակի հետ էր կապել Ադամեանը տեղի հանդիսատեսին: Հրաշք գործած բեմական հանճարը դարձել էր ամբողջ քաղաքի սիրելին»[3]: Բացի այդ, Լէոն նաեւ անդրադարձել է այն երեւոյթին, թէ Շուշիում ինչ մեծ մտաւոր շարժում է կենդանացրել Պ. Ադամեանը, որը երկու դիւթիչ ուժ ունէր՝ բեմական արուեստ եւ հայոց լեզու. «Մինչեւ այժմ էլ թւում է, թէ պահել եմ ականջներիս մէջ մեծ արուեստագէտի շեշտերն ու հնչիւնները»[4]: Պ. Ադամեանի խաղից յետոյ կարծիքներն ու տպաւորութիւնները չուշացան: Հայ դրամատուրգ Եկատերինա Բահաթուրն առանձնայատուկ ոգեւորութեամբ էր գրել, որ «Ադամեանը համակում էր ամէնքին, հասցնում ինքնամոռացութեան, հիպնոսացնում: Ամբողջ դահլիճը ցնցուեց, ամէնքը ինչպէս մի մարդ ոտքի կանգնեցին, մի վայրկեան կարծես քարացան: Ես ինքս մոռացայ, որ թատրոնում եմ, մոռացայ, որ տաժանակիր աշխատանքից փախած այդ ոճրագործը (Կորրադո.- ընդգծումը մերն է - **Վ. Ա.**) միմիայն հանճարեղ դերասան է...»[5]: Հարկ է նշել, որ Պ. Ադամեանի այդ անչափ կարեւոր այցից յետոյ Շուշիում սկսեցին աւելի շատ հետաքրքրուել թատերարուեստով եւ սկսեցին աշակերտական, ուսանողական եւ ուսուցչական սիրողական խմբակներ գործել:

1882 թուականին հիւրախաղերով Շուշի են գալիս Ստեփան եւ Ալմա Սաֆրազ-

---

[2] **Ե. Լալայեան**, «Ազգագրական հանդէս», թիւ 11, Բ. գիրք, Թիֆլիս, 1897, էջ 106:

[3] **Բ. Խանդամիրեան**, **Ս. Յարութիւնեան**, էջեր Շուշիի հայ թատրոնի անցեալից, Երեւան, 1978, էջ 6:

[4] **Լէո**, Անցեալից, Թիֆլիս, 1925, էջ 33:

[5] **Բ. Խանդամիրեան**, **Ս. Յարութիւնեան**, էջեր Շուշիի հայ թատրոնի անցեալից, Երեւան, 1978, էջ 7:

եան ամուսինները եւ ցուցադրում «Շուշանիկ», «Սանդուխտ կոյս», «Սամուէլ», «Թուղթ խաղացողի կեանքը», «Խան Սարիբի վեզիրը», «Կրոթ-կրոթ» եւ այլն[6]: Մէկ տարի յետոյ՝ 1883 թուականին, Աբրահամ Տէր-Գասպարեանի եւ Յովհաննէս Ճաղարբեկեանի նախաձեռնութեամբ Շուշիում բեմադրւում են Գ. Սունդուկեանի «Պեպոն», «Քանդած օջախը», Մ. Տէր-Գրիգորեանի «Վոյ քի իմ վեչեր» եւ «Ո՞վ է մեղաւոր» ոգեւիլները, 1887-ին՝ Թ. Ֆասուլաճեանի «Երկու քաղցածները»[7]: 1880-1890 թթ. կարծես առանցքային եղան քաղաքի մշակութային կեանքում: Այդ տարիներին Շուշիի թատերասէր երիտասարդութիւնը յաճախակի քաղաքի հայոց թեմական դպրոցի դահլիճում տարատեսակ պիեսներ էր բեմադրում («Որդիական սէր», «Խաթաբալա», «Պեպո», «Էլի մէկ զոհ», «Քանդած օջախ», «Վարդանանց պատերազմ», «Բռնի ամուսնութիւն», «Արշակ Երկրորդ», «Անանուն կտակ» եւ այլն): «90-ական թուականներին Շուշիի թատրոնի նշանակութիւնը մեծացել է: Որպէս գաստրոլային կեդրոն այս թատրոնը դարձել է աւելի կարեւոր, քան Ալեքսանդրապոլի ու Երեւանի թատրոնները»[8]:

Արդէն 1900-ականներին Շուշին յայտնի դարձաւ մշակութային եւ թատերական ուրոյն դիմագծով, որին մեծապէս նպաստեց 1891 թուականին կառուցուած թատրոնի շէնքը, որը 1905 թուականին կովկասեան թաթարների հետ ծաւալուած արիւնալի զինուած բախումների ժամանակ հրի է մատնուել: 1891-1896 թուականներին «Խանդամիրեան» թատրոնում 119 ներկայացում է ցուցադրւում, այսինքն տարեկան միջին թուով 20 ներկայացում: Շէնքը հրդեհուելուց յետոյ ներկայացումները խաղում էին հիմնականում թեմական դպրոցի դահլիճում, ռեալական դպրոցի դահլիճում, տներում: 1896 թուականից Շուշիի թատերական կեանքում յայտնւում են հայ բեմի նշանաւոր դէմքեր Սիրանոյշը, Յովհաննէս Աբէլեանը, Յովհաննէս Զարիֆեանը, Գրիգոր Աւետեանը, Արուս Ոսկանեանը, Օլգա Գուլազեանը եւ շատ ուրիշներ, որոնք իրենց դերասանախաղով տպաւորել են շուշեցի հանդիսատեսին: 1891-1905 թթ. Շուշիի հայկական թատրոնում բեմադրւում էին հայ եւ օտարազգի հեղինակների՝ Գ. Սունդուկեանի, Ալ. Շիրուանզադէի, Յ. Պարոնեանի, Ա. Պուշկինի, Ն. Գոգոլի, Ա. Չեխովի, Մ. Լերմոնտովի, Ա. Օստրովսկու, Հ. Իբսենի, Սերվանտեսի, Շիլլերի, Մոլիերի եւ Հիւգոյի երկերը: Շէյքսփիրեան պիեսները՝ «Համլետը», «Օթելլոն», «Լիր արքան» եւ «Վենետիկի վաճառականը» եւս բուռն արձագանք գտան հանրութեան շրջանում եւ սիրուեցին: Հայկական ներկայացումներին, ինչպէս ծանօթանում ենք արխիւային նիւթերում, ժամանակ առ ժամանակ ներկայ էին լինում ատրպէյճանցիներ, այդ թւում մտաւորականներ եւ հասարակական գործիչներ: 1893 թուականին Շուշիի թատերական կեանքում յայտնուեց հայ բեմի վարպետ Յովհաննէս Աբէլեանը: Դերասանուհի Վարեա Մելիքեանը դառնում է այդ շրջանի նրա խաղընկերը: Յովհաննէս Աբէլեանը Շուշիի թատրոնում ոչ միայն խաղում էր, այլ նաեւ բեմադրում: Նշանակալի է Շիրուանզադէի երկերի նրա բեմադրութիւնները: Աբէլեանը Շուշիի թատրոնում հասցրել է բեմադրել «Ամուսինները», «Ոճրագործի ընտանիքը», «Էլի մէկ զոհը», «Պեպոն», «Մեծապատիւ մուրացկանները» եւ այլ պիեսներ: Յովհաննէս Աբէլեանի գործը Շուշիում շարունակեց դերասան ու ռեժիսոր Գէորգ Պետրոսեանը, ով 1881-82 թթ. եղել է Թիֆլիսի թատերական կոմիտէի դերասանական մշտական խմբում՝ Օրդուբադեան բեմական ազգանունով: Գ. Պետ-

---

[6] Ստ. Սաֆրազեան, «**Մեղու Հայաստանի**», Շուշի, 1882, 16 Սեպտեմբերի:

[7] **Բ. Յարութիւնեան**, XIX-XX դարի հայ թատրոնի տարեգրութիւն (1801-1922), հատ. Ա, Երեւան, 1980, էջ 139-140, 291:

[8] **Հ. Յովհաննիսեան**, Հայ թատրոնի պատմութիւն, 19-րդ դար (երկրորդ՝ բարեփոխուած հրատարակութիւն), Երեւան, 2010, էջ 501:

րոսեանը մի շրջանում եղել է նաեւ Պետրոս Ադամեանի խաղընկերը։ Հայկական թատերարուեստը մասսայականացնելու համար միայնակ եւ խմբերով հանդէս է եկել հայաշատ քաղաքներում։ Գ. Պետրոսեանը Շուշիում բեմադրում է մօտ քառասուն պիես։ Յատկանշական է, որ նա 1895 թուականին բեմադրում է Մ. Լերմոնտովի «Դիմակահանդէսը», ինքն էլ կատարում Արբենինի դերը։ Իսկ երկու տարի յետոյ՝ 1897 թուականին, «Օթելլոյում» մարմնաւորում է Մաւրին։ Գ. Պետրոսեանը եւս սէր էր վայելում շուշեցի հանդիսատեսի կողմից։

Մկրտիչ Խանդամիրեանը եւ «Խանդամիրեան» թատրոնը

Շուշիի «Խանդամիրեան» թատրոնի հիմնադիրն ու ղեկավարը եղել է Մկրտիչ (Նիկիտա) Խանդամիրեանը, ով մեծ ներդրում է ունեցել Շուշիում թատերական կեանքի ձեւաւորման գործում։ Մկրտիչ Խանդամիրեանը ծնուել է 1847 թուականին, Շուշիում։ Նրա նախնիները զինուորականներ ու պղնձագործներ են եղել եւ գաղթել են Կապանի գաւառի Շահկերտ (Ղազանչի) գիւղից։ Հօր՝ Աբրահամ Խանդամիրեանի թողած ժառանգութիւնը Մկրտիչը որոշում է թատրոնի հիմնադրման գործին ծառայեցնել։ Հայրը որոշում է որդուն ուղարկել Ֆրանսիայի Մարսէյլ քաղաք՝ շերամապահութեան տեխնոլոգիան սովորելու եւ մետաքսի արդիւնաբերութեան աշխատանքներում մասնագիտական հմտութիւններ ձեռք բերելու համար։ Մկրտիչ Խանդամիրեանը Մարսէյլից տեղափոխւում է Փարիզ եւ ծանօթանում ժամանակի արուեստին ու թատերական նորարարութիւններին։ Նրան գրաւում են ֆրանսիական մեծաշուք թանգարանները, որտեղ համաշխարհային նշանակութիւն ունեցող ցուցանմոյշներ են պահւում, կլանում է ֆրանսիական գրականութիւնը, կերպարուեստն ու երաժշտութիւնը։ Իսկ առ թատերարուեստ սէրը նրան հետ է բերում Շուշի։

«Շուշուայ թատրոնի շէնքը կառուցուել է ըստ Խանդամիրեանի կազմած նախագծի եւ նրա անմիջական հսկողութեան ներքոյ, իր պապական տան տեղամասում, մի քանի տարուայ ընթացքում։ Նա թէ՛ թատրոնի շէնքը նախագծելիս եւ թէ՛ ներքին կահաւորումները ստեղծելիս լայնօրէն օգտագործել է Փարիզում ձեռք բերած իր փորձը՝ հաշուի առնելով տեղի պայմաններն ու ազգային ճաշակը»[9]։ «Խանդամիրեան» թատրոնն ունէր 350 տեղանոց դահլիճ, յարմարաւէտ բեմ, ընդարձակ ճեմասրահ, պարտեր, օթեակներ, ամֆիթատրոն։ Թատրոնը լուսաւորւում էր նաթէ լամպերով։ Վարագոյրը նկարել է վրաց նկարիչ Օ. Շմեռլինգը, ով յատուկ հրաւիրուել է Թիֆլիսից։ Ձեւաւորման պատկերը եղել է հետեւեալը. «Աւերակների վրայ նստած, ազգային տարազով գեղեցիկ հայուհին, եօթնամեայ մի երեխայի (դարձեալ ազգային տարազով) ձեռքով ցոյց է տալիս հեռուն՝ Արարատեան դաշտը, այն շրջապատող բարձր լեռներով ու նրանց ստորոտում հոսող գետով։ Այս պատկերային բովանդակութեամբ վարագոյրը մնաց միայն մէկ շաբաթ։ Յարական ոստիկանութիւնը պահանջում է վերացնել վարագոյրը։ Այն դրւում է փականքի տակ։ Շպերլինգը վերստին հրաւիրւում է Շուշի, փոփոխում է վարագոյրի նկարը, կնոջ փոխարէն նկարում է ծերուկ աշուղի, սազը ձեռքին»[10]։ «Խանդամիրեան» թատրոնի բացման օրը՝ 1891 թուականի Յուլիսի 7-ին, ինքնագործ թատերախումբը ներկայացրել է հայ գրող եւ դրամատուրգ, ծնունդով շուշեցի Մուրացանի «Ռուզան» պատմական դրաման։ Սա կարեւոր էջ է հայ թատերարուեստում։ Պատմական դրաման եղաւ հաւաստումն այն բանի, որ հայկական շունչ, ոգի

---

[9] **Ք. Խանդամիրեան**, Շուշի քաղաքի թատերական կեանքից, «**Սովետական արուեստ**», թիւ 8, Երեւան, 1969, էջ 47։

[10] **Ք. Խանդամիրեան**, **Ս. Յարութիւնեան**, էջեր Շուշիի հայ թատրոնի անցեալից, Երեւան, 1978, էջ 15։

եւ արժանապատուութիւն է ապրում Շուշիում եւ հայ մարդը չի կարող մոռանալ իր կենսագրութիւնը, որը կենսահաստատ է։

Թատերական կեանքի ձեւաւորման նոր շրջանը Շուշիում (1994-2020)

Արցախեան առաջին պատերազմից յետոյ Շուշին կրկին իր մշակութային դիմագիծը սկսեց ուրուագծել։ Իրար յաջորդեցին Սոս Սարգսեանի անուան մանկապատանեկան, Երուանդ Մանարեանի անուան տիկնիկային եւ Շուշիի դրամատիկական թատրոնների հիմնադրումը։ Ե. Մանարեանի անուան պետական տիկնիկային թատրոնում գեղարուեստական ղեկավար Կ. Մաղաքեանը բեմադրել է իր հեղինակային «Հաստ ու բարակ մի գին է», «Ադամի մեղքը» տիկնիկային եւ «Սպիտակ հացը» դրամատիկական ներկայացումները, Յ. Թումանեանի «Ոսկի քաղաքը», «Պոչատ աղուէսը», «Հենզէլն ու Գրետէլը» ստեղծագործութիւնները, ինչպէս նաեւ «Երեք խոզուկները», «Թզուկի տնակը», «Ագահ փայտահատը», «Նապաստակի տնակը», «Արեւիկը հասկացաւ» տիկնիկային ներկայացումները։ Ս. Սարգսեանի անուան մանկապատանեկան թատրոնում հիմնականում բեմադրւում էին արցախեան բարբառով ներկայացումներ, այդ թւում՝ Յ. Թումանեանի «Գիքորը», «Տէրն ու ծառան», «Բարեկենդանը»։ Թատրոնը մեծ ուշադրութիւն էր դարձնում նաեւ Պ. Սեւակի, Վ. Տէրեանի, Հ. Սահեանի, Յովհ. Շիրազի, Ս. Խանեանի, Վ. Գաբրիէլեանի ստեղծագործութիւնների բեմականացմանը։ Յատկանշական է, որ թատրոնի դերասանական խումբը դպրոցականներ էին, որոնցից ոմանք յետագայում ընտրել են թատերարուեստի ուղին։ Շուշիի դրամատիկական թատրոնում 2000-2006 թթ. բեմադրուել են մէկ տասնեակից աւելի դրամատիկական ներկայացումներ, հիմնականում հայ դրամատուրգ Արամաշոտ Պապայեանի պիեսներից։ Այս երեք թատրոններն առանձին գործեցին մինչեւ 2008 թուականը։ Նոյն թուականին թատրոնների միաւորման արդիւնքում ստեղծուեց «Աստղիկ» մանկապատանեկան թատրոնը, որը 2009 թուականին վերանուանուեց Շուշիի Մ. Խանդամիրեանի անուան պետական թատրոն։ Թատրոնի տնօրէն եւ գեղարուեստական ղեկավար նշանակուեց ԱՀ ժողովրդական արտիստ Լեոնիդ Յարութիւնեանը։ Վերջինս դասական ստեղծագործութիւնների կողքին բեմադրում էր նաեւ ժամանակակից ստեղծագործութիւններ։ Շուշիի թատրոնն ամուր կապեր է ստեղծում Հայաստանի գրեթէ բոլոր թատրոնների հետ, հանդէս են գալիս փոխադարձ հիւրախաղերով, ձեւաւորւում է համագործակցային ամուր շղթայ. «Շուշիի թատրոնն արժանապատւօրէն է ներկայացնում Արցախի թատերական արուեստը։ Թատրոնը նուիրեալ անձնակազմ ունի, անխախտ ներուժ ու վճռական տրամադրուածութիւն»[11]։

Շուշիի թատրոնը նոր ոճով, գաղափարներով, տարատեսակ մօտեցումներով, արդիական ներկայացումների առումով երբեք չի երկմտել։ Դրան մեծապէս նպաստել է համաշխարհային տիկնիկային արուեստն ուսումնասիրելը։ 2008-2022 թթ. Լ. Յարութիւնեանը բեմադրել է իր հեղինակային «Գարուն», Խ. Ասատրեանի «Գիւմրեցի խուլ պառաւների զրոյցը», Ա. Շահինեանի «Շունն ու կատուն» (ըստ Յովհաննէս Թումանեանի), Վ. Սարոյեանի «Հե՛յ, ո՞վ կայ այդտեղ», Գ. Սարգսեանի «Դաս կանանց», Վ. Վարդանեանի «Լուսերեսն ու Վարդերեսը», Պ. Սեւակի «Եղերերգ», Ա. Եգանեանի «Զմեռ պապն արթնացաւ», Յովհ. Թումանեանի «Թռչուն ընկեցիկը», Ռ. Եսայեանի «Յարութեան ժամանակը», Ս. Մուրատեանի «Ծպտուած Զմեռ պապն ու Զիւնանուշը», Յովհ. Թումանեանի «Սասունցի Դաւիթ», Լ. Յարութիւնեանի «Պարոյր Սեւակ-89», Ա.

---

[11] **Վ. Արզումանեան**, Ճանապարհներ, որ սկսում են թատրոնից, https://tatron-drama.am/archives/5898, 04.01.2023:

էդարի «Անահիտ» (ըստ Ղ. Աղայեանի հէքիաթի), Ժ. Այվազեանի «Յեղասպանութիւն-100», Լ. Մկրտչեանի «Հայ մուկը» (ըստ Վ. Սարոյեանի «Հայ մուկը», «Մաղադանոսի այգին», «Նարինջները» պատմուածքների), Հայկ Հրայրի «Աղօթող մեղեդիների վերադարձը», Ս. Օբրազցովի «Ոսկէ ճուտիկը» պիեսները: Թատրոնում ստեղծագործել եւ բեմադրութիւններ են իրականացրել նաեւ այլ ռեժիսորներ: Վ. Գէորգեանը բեմադրել է Ե. Մանարեանի «Պոչատ աղուէսը» տիկնիկային, Ա. Չեխովի «Առաջարկութիւն», ըստ Յովհ. Թումանեանի հէքիաթների «Լինում է, չի լինում» դրամատիկական ներկայացումները: Կ. Մաղաքեանը բեմադրել է Ե. Մանարեանի «Երեք խոզուկները» տիկնիկային ներկայացումը, Է. Թաթիկեանի եւ Գ. Առաքելեանը «Թուխի ծննդեան տարեդարձը», «Ջնեմարդը» տիկնիկային ներկայացումները (պիեսները Է. Թաթիկեանի), Գ. Առաքելեանը Է. Թաթիկեանի «Մեր տունը» տիկնիկային ներկայացումը, ինչպէս նաեւ Է. Թաթիկեանը բեմադրել է հեղինակային «Հրաշք № 26» թատերային անիմացիան: Ա. Գէորգեանը բեմադրել է Ա. Չեխովի «Արջը», Կ. Գրիգորեանը՝ հեղինակային «Կոմիտաս» դրամատիկական, Կ. Մաղաքեանը՝ «Արեւիկը հասկացաւ» տիկնիկային ներկայացումները: Այս ամէնը հիմքում ունենալով կարելի է փաստել, որ կայուն խաղացանկի շնորհիւ թատրոնը կարողացաւ հանդիսատեսի մեծ հոսք ապահովել եւ թատերարուեստի էջում իր ուրոյն տեղն ամրագրել: Խաղացանկային քաղաքականութիւնը թոյլ է տալիս եզրակացնելու, որ թատրոնը միշտ պատրաստ է փոփոխութիւնների եւ նորութիւնների: Արցախի թատերական կեանքում ուշագրաւ է նաեւ պոեզիայի թատրոնի ձեւաչափում հանդէս գալու փաստը: Լ. Յարութիւնեանի մտայղացումը Շուշիի թատրոնի նոր ոսկեդարում կարեւոր ու գործուն միջոց դարձաւ. «Ստեղծելով պոեզիայի թատրոն, ես դարձրել եմ պոեզիան հոգեւոր սնունդ, որն ընդունելով՝ մարդը դառնում է հոգով աւելի պինդ, հարուստ ու վեհ, յաղթահարում է թերարժէքութեան զգացողութիւնը, ապրում լիարժէք կեանքով»[12]: Պոեզիայի թատրոնի ձեւաչափում յատկանշական է «Յարութեան ժամանակը» բեմադրութիւնը՝ ըստ շուշեցի բանաստեղծ Ռոբերտ Եսայեանի համանուն գրքի: Ստեղծագործութեան հեղինակն էլ է վստահ, որ «թէեւ պոեզիան վերին երեւոյթ է եւ կարիք չունի որեւէ արուեստի միջնորդութեան, բայց մեր հասարակութեան համար շատ օգտակար է, երբ նաեւ քարոզչութեան այդ ձեւն է աշխատում, յատկապէս, որ բանաստեղծութիւնն անմիջապէս մտնում է ընթերցողի եւ հանդիսատեսի սիրտը»[13]:

Թատրոնի գործունէութիւնը 2020 թ.-ի 44-օրեայ պատերազմից յետոյ

2020 թ. Սեպտեմբերի 27-ին Ատրպէյճանի կողմից սանձազերծուած պատերազմի հետեւանքով փոխուեց թատրոնի ծրագիրը: Թատրոնը գործեց նաեւ 44-օրեայ պատերազմի ժամանակ. ոչինչ չունենալով, խանութից փափուկ խաղալիքներ գնեցին, որոշ չափով ձեւափոխելուց յետոյ Գիւմրիում սկսեցին Արցախից տեղահանուած երեխաների համար ներկայացումներ խաղալ: 2020 թուականի 44-օրեայ պատերազմից յետոյ Մ. Խանդամիրեանի անուան պետական թատրոնը յայտնուել է շրջիկ թատրոնի կարգավիճակում: Չնայած դրան, արդէն հինգ խաղացանկային ներկայացում է վերականգնուել՝ «Պոչատ աղուէսը», «Հայ մուկը», «Երեք խոզուկները», «Թուխի ծննդեան տարեդարձը», «Շունն ու կատուն»՝ պրոֆեսիոնալ տիկնիկներով, իսկ մէկ նոր ներկայացում էլ՝ «Ոսկէ ճուտիկը»[14], 2022 թուականին է բեմադրուել: 44-օրեայ պատերազ-

---

[12] **Ռ. Եսայեան**, Թատերարուեստի երախտաւորը, Ստեփանակերտ, 2018, էջ 184:

[13] **Շ. Երիցեան**, Պոեզիայի թատրոնը՝ բաբախուն երակ, https://www.grakantert.am/archives/7902, 05.01.2023:

[14] **Վ. Արզումանեան**, Շուշիի թատրոնի խաղացանկը համալրւում է, https://vardananq.am/?p=1098, 05.01.2023:

մից յետոյ, հիւրախաղերին զուգահեռ, Շուշիի թատրոնն առցանց ներկայացումներ է խաղացել Ռուսաստանի եւ Գերմանիայի հայ համայնքների երեխաների համար։ Թատրոնի գործող տնօրէն Աշխէն Յարութիւնեանի խօսքով՝ «Առցանց ներկայացումների ցուցադրութիւնը կարեւոր նպատակներ ունեն. որպէսզի արտերկրի երեխաները տեսնեն՝ թէեւ Շուշին այս պահին մերը չէ, բայց Շուշիի թատրոնը կայ, ու նաեւ տեսնեն, թէ իրենց հայրենիքում ինչ արուեստ է ստեղծւում եւ ինչպիսի զարգացում է ապրում, խոչընդոտներով լի արուեստի ճանապարհով կերտում իր ուղին»[15]։

Կարծում ենք այսօր, թատրոնի յետագայ ճանապարհն աւելի արդիւնաւէտ դարձնելու եւ վերակազմակերպելու համար մեծապէս կարող են նպաստել արուեստի կառավարիչները։ Այդպիսով կը ձեւաւորուի համագործակցութեան շղթայ ոչ միայն հիմնադրամների ու հասարակական կազմակերպութիւնների, այլեւ մարզային իշխանութիւնների, մանկական խաղալիքներ, հագուստ, քաղցրաւենիք եւ հիւթեր արտադրող ընկերութիւնների հետ՝ երկուստեք ապահովելով գովազդային քաղաքականութիւն։

Եզրակացութիւն

Այսօր իր պատմական հայրենիքից դուրս գտնուելով, Շուշիի Մ. Խանդամիրեանի անուան պետական թատրոնը առանձնայատուկ արժէք է Արցախի համար. այն Արցախ աշխարհի քաղաքակրթութեան ու մշակութային բազմամեայ պատմութեան անձնագիրն է, խորհրդանիշը, արարող երակը։ Թատրոնն ունի ստեղծագործական յստակ ուղենշուած ճանապարհ, երիտասարդ ու եռանդուն կազմ, վերականգնուած խաղացանկային ներկայացումներ։

Շուշիի պետական թատրոնում տարբեր տարիների բեմադրուել են տիկնիկային, մանկապատանեկան, դրամատիկական ներկայացումներ։ Կարեւոր է նաեւ այն հանգամանքը, որ թատրոնը ձեռք մեկնեց պոեզիա բեմադրելուն, որովհետեւ վերջինս, շնորհիւ կեանքն առաւել ընդգրկուն պատկերելու հնարաւորութեան, լիովին բաւարարում է ժամանակակից հանդիսատեսի գեղագիտական պահանջները։ Ժամանակակից կեանքի տեղեկատուութեան սրընթաց հոսքը հանդիսատեսի մէջ զարգացրել է կարճ ժամանակում բազմաթիւ թեմաների ընկալման ու իւրացման յատկութիւնը։ Փորձ չի արուել քնարական ձեւը դրամատիկականի կամ էպիկական ձեւը քնարականի մէջ տարրալուծելու։ Շեշտը դրուել է խօսք-ներկայացման վրայ. թէ ի՞նչ են պատմում դերասաններն ու ինչպէ՞ս են պատմում։

Թատրոնը շրջիկ կարգավիճակում նոյնպէս գործում է կանոնաւոր ու նպատակային, քանի որ այն զուտ ստեղծագործական խնդիր կատարող չէ, այլ ինչ-որ առումով ռազմավարական, Շուշիի մշակութային պատմութիւնն ամրագրող ու պահպանող, փոքր երկրի արուեստի զարգացման կարեւոր ազդակ։

ՎՈՎԱ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

[15] **Վ. Արզումանեան**, Մարդկային ճակատագրով Շուշիի թատրոնը, https://tatron-drama.am/archives/5874, 06.01.2023։